«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1709 ՀՀ Լոռումարզ, ք. Ախթալա    հեռ՝ (+374) 098 311 365    Info@akhtalacopper.am

ել N 15-109

«25» մարտ 2015թ.

*Ալավերդու Օրհուս կենտրոն*
*բնապահպանական տեղեկատվության*
*հասարակական կենտրոնի*
*համակարգող Անուշ Էվոյանին*

Հարգելի տիկին Էվոյան

Համաձայն Ձեր սույն թվականի մարտի 23 գրությամբ բարձրացված հարցերի՝ հայտնում ենք, որ Լոռու մարզի Մեծ Այրում և Ճոճկան համայնքներից մեր ընկերությանը հատկացված արտադրական նշանակության հողատարածքներում իրականացվել են երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ համապատասխան մասնագիտացված <<Լեռնամետալուրգիայի ինստիտուտ>> ՓԲ ընկերության կողմից:

2-րդ հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր ընկերության համար նախատեսված պոչամբարում կառուցման աշխատանքների նախագիծը պատվիրված է համապատասխան մասնագիտացված ընկերության և ներկայումս գործընթացի մեջ է:

Եվ վերջին հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ նոր պոչամբար կառուցելու դիմումին կից ներկայացվելու է գործող Նահատակ կոչվող պոչամբարի փակման և ռեկուլտիվացման աշխատանքների վերաբերյալ նախագիծ:

Հարգանքով՝

Մարտին Հակոբյան
գլխ. տնօրեն

"Akhtala Mountain-Enrich Combinat"" CJSC
c. Akhtala, Marz Lori, RA,
tel. (+374) 98 311 365

"АхтальскийГорнообогатительныйкомбинат"ЗАО
РА, Марз Лори, г. Ахтала
Тел (+374) 98 311 365